Սանհանգույցներ

Զուգարանի հարմարավետությունը ամենակարևոր դեր է խաղում սայլակով մարդու համար ուրիշների հետ համեմատ հավասար պայմանների ապահովման գործում:

Սանհանգույցի դռան նվազագույն թույլատրելի լայնությունն է՝ առնվազն 80 սմ: Շատ հարմար են դեպի կողմ բացվող դռները:

Լուսանկար 1

Եթե այդպիսի դռան տեղադրումը հնարավոր չէ, կարելի է կառուցել դեպի դուրս բացվող դուռ, իսկ ներսի կողմից դռան վրա բռնիչ տեղադրել (տե՛ս լուսանկար 1):

Ամենակարևորն է՝ ապահովել սայլակի անարգել մոտեցումը զուգարանակոնքին: Այն պետք է տեղադրվի սանհանգույցի անկյունում (այլ ոչ թե երկու պատի մեջտեղում):

Զուգարանակոնքից աջ կամ ձախ կողմում պետք է լինի 80 սմ-ից ոչ պակաս լայնությամբ և 110-120 սմ երկարությամբ (զուգարանակոնքին զուգահեռ) ազատ տարածք, իսկ այդ տարածքի հակառակ պատին՝ բռնաձող (տե՛ս լուսանկար 2): Վերջինիս շառավիղը պետք է լինի 3-5 սմ (առավել հարմար են 4 սմ շառավղով բռնաձողերը):

Բռնաձողը պետք է լինի շատ ամուր, բարձրությունը՝ հատակից մոտավորապես 80 սմ: Այն պետք է տեղադրվի պատից 5-15 սմ, իսկ զուգարանակոնքից՝ մոտավորապես 17 սմ հեռավորության վրա: Զուգարանում ցանկալի է նաև հատակից 130 սմ-ից ոչ ավել բարձրության վրա տեղադրել կախիչներ հագուստի, հենակների և այլ պարագաների համար:

Հաշմանդամների հարմարության համար ցանկալի է լվացարանը տեղադրել անմիջապես զուգարանախցում: Շատ կարևոր է այնպիսի տեղ ընտրել լվացարանի համար, որ այն չկրճատի անվասայլակի տեղակայման համար անհրաժեշտ ազատ տարածությունը: Անհրաժեշտ է նաև նախատեսել զուգարանակոնքին նստած վիճակում լվացարանից կամ ցնցուղից օգտվելու հնարավորությունը: Լվացարանը պետք է տեղադրել մոտավորապես 85 սմ բարձրության վրա և ապահովել, որ դրա տակը լինի ազատ տարածք (այսինքն, չլինի սիֆոն կամ որևէ այլ առարկա, որը կխոչընդոտի սայլակով մարդուն հարմար դիրք ընդունել):

Հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցներում հաճախ տեղադրում են նաև երեխաներին բարուրելու (կամ երեխայի «պամպերսը» փոխելու) համար նախատեսված ծալովի սեղան:

Լուսանկար 2